ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

11 ԱՊՐԻԼԻ 2025թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Գրիգորյանը, Արմեն Դավթյանը, Անուշ Իսպիրյանը, Վանո Հակոբյանը, Լիլիա Հարությունյանը, Հայկ Մարիկյանը, Սյուզաննա Նազարյանը, Աղունիկ Նալբանդյանը, Արմեն Ջուլհակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Արսեն Հարությունյան, Լուսինե Հովհաննիսյան, Լևոն Քալանթարյան, Արսեն Ավագյան, Էլմիրա Ռևազյան, Գրիգոր Պապյան, Գայանե Ղալաչյան, Անուշ Կիրակոսյան, Մարիամ Մանուկյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Հրահատ Աբրահամյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը

Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությամբ և ավագանու անդամների համաձայնությամբ օրակարգային հարցերին ավելացվեց ևս 1 հարց:

ԼՍԵՑԻՆ

*ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. Հաստատել համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26)*

ԼՍԵՑԻՆ

*ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը Ստեփանավան համայնքի 2025թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27)*

ԼՍԵՑԻՆ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻ (ԶԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օերնքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 139-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2025 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28)*

ԼՍԵՑԻՆ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԵՐՈՎ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՁԵԿ. ԳԱՅԱՆԵ ՂԱԼԱՉՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. «Ստեփանավանի մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցի կենտրոն» ՀՈԱԿ հաճախող այն սաներին, ովքեր կմասնակցեն Հայաստանի առաջնություններին, Եվրոպայի և Աշխարհի առաջնություններին և կգրանցեն հաղթանակներ և մրցանակային տեղեր ազատել վարձավճարից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 29)*

ԼՍԵՑԻՆ

*ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՁԵԿ. ԱՐՍԵՆ ԱՎԱԳՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի առաջարկությունը Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Հաստատել Ստեփանավան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման տեղական կառավարման պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 30)*

ԼՍԵՑԻՆ

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱԳՈՄԸ ԵՎ ՊԱՀԵՍՏԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման VIII-րդ բաժնի դրույթներով, հիմք ընդունելով 07.09.2010թ. N 08042025-06-0009 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Ստեփանավան համայնքի ավագանին՝ *որոշում է*

1. Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող՝ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք գ. Կաթնաղբյուր, 8-րդ փողոց, թիվ 20 արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության, 06-051-0043-0001 կադաստրային ծածկագրի 1,26 հա մակերեսով հողամասը, հողամասում առկա 41.1 քմ մակերեսով պահեստը , 1641.9 քմ մակերեսով անասնագոմը և 1641.1 քմ մակերեսով անասնաշենքը վարձակալությամբ տրամադրելուն: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ: Վարձակալության ժամկետը 10 տարի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 31)*

ԼՍԵՑԻՆ

*ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.07.2024 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 91-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 12.07.2024 թվականի «Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության տրամադրելու մասին» թիվ 91-Ա որոշմամբ՝ բոլոր հողամասերի համար սահմանված «25 տարի» վարձակալության ժամկետները փոխարինել «5 տարի» ժամկետով:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 32)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

*ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.05.2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 49-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. «Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ավագանու 13.05.2022թ. «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնք Ստեփանավան քաղաքի Մ. Բաղրամյան փողոց 124/2 հասցեում գտնվող Արթուր Ֆուրդենիկի Վարդումյանին սեփականության իրավունքով պատկանող 37.6 քմ ներքին մակերեսով խանութի շենքի զբաղեցրած 50.31 քմ արտաքին մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին» թիվ 49-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 33)*

ԼՍԵՑԻՆ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 24-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՁԵԿ. ԼԵՎՈՆ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 14-ի թիվ 24-Ա որոշման աղյուսակում նշված 4-րդ համարակալման տողի՝ 14032025-06- , 14.03.2025 թվերը փոխարինել 02042025-06-0009, 02.04.2025 թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 34)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ 06-007-1519-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0,25 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(ՁԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով 20.11.2023թ. 20112023-06-0067 սեփականության վկայականը, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները

համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 03.04.2025թ. թիվ 2/փ 119 դրական եզրակացությունը Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. Տալ հավանություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռու-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝ Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքի վարչական սահմանում գտնվող 06-007-1519-0003 կադաստրային ծածկագրի 0,25 հա մակերեսով ջրային նպատակային նշանակության ջրային հողերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, էներգետիկայի հողեր գործառնական նշանակության:
2. Համայնքի ղեկավարին՝ նշված փոփոխություններն արտացոլել Ստեփանավան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Ստեփանավան քաղաքի հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 35)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

*ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՁԵԿ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. Ստեփանավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 07.05.2025թ. ժամը 14.30 ին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 36)*

Ավագանու անդամներ

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՐՍԻԿ ԱՍՐՅԱՆ

ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՏՈՄ ԳԱԳԻՆՅԱՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՊԱՊՅԱՆ

ԼԵՎՈՆ ՊԱՊՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏՈՆՈՅԱՆ

*Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ*

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ_____

*Նիստն արձանագրեց՝* Հասմիկ Մովսիսյանը

_____